Արձանագրություն N 2

ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22.03.2018 թ.
ժամը 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ռ. Եղիազարյան
Հանձնաժողովի անդամներ՝	Գ. Գևորգյան / գնահատող /
	Ա.Գրիգորյան / բացող /
	Ֆ.Սարգսյան / բացող /
	Գ. Խորենյան /գնահատող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Հարությունյան

1. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Ռ.Եղիազարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2018 թվականի մարտի 22-ին ժամը 14:30-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է՝ 8 445 000 (ութ միլիոն չորս հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<Հուսալի Կամար>> ՍՊԸ	husali-kamar@mail.ru	2 100 000	-	2 100 000
2	<<ՀՀ նախագծերի պետական արտաքերատեսչական փորձաքննություն >> ՍՊԸ	ekspertizaproektov@mail.ru:	3 300 000	660 000	3 960 000
3	<<Արման-Թաման>> ՍՊԸ	mouradmo@mail.ru	5 000 000	-	5 000 000
4	<<ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ >>ՍՊԸ	samartshin@mail.ru	6 500 000	-	6 500 000

Ընդունվել է որոշում կողմ - 5, դեմ - 0:

2. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Ռ.Եղիազարյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<Հուսալի Կամար>> ՍՊԸ	բավարար
2	<<ՀՀ նախագծերի պետական արտագերա-տեսչական փորձաքննություն >> ՍՊԸ	բավարար
3	<<Արման-Թաման>> ՍՊԸ	բավարար
4	<<ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ >>ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ռ.Եղիազարյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<Հուսալի Կամար>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած <<Հուսալի Կամար>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացնելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ռ.Եղիազարյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պատասխանները ստանալու օրը, բայց ոչ ուշ, քան 2018 թվականի մարտի 29-ը ժամը 11:30-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ռ.Եղիազարյան

Անդամ՝ ---------- Գ.Գևորգյան

---------- Ա.Գրիգորյան

---------- Ֆ.Սարգսյան

---------- Գ. Խորենյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան